«Գործընկերություն հանուն լավ կառավարման» Արևելյան գործընկերության երկրների համար առցանց միջոցառում. քաղաքացիների կյանքի բարելավում ավելի լավ կառավարման միջոցով

Եվրոպական հարևանության և ընդլայնման հարցերով հանձնակատար Օլիվեր Վարհելիի տեսաուղերձը

Հարգելի մասնակիցներ և գործընկերներ,

Մենք ապրում ենք աննախադեպ ժամանակներում, որոնք առաջացել են **COVID-19-ի բռնկման** հետևանքով: Եվ մեր առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու համար մեզ անհրաժեշտ են աննախադեպ արձագանքներ: Եվրոպական հանձնաժողովը քրտնաջան աշխատանք է տանում դրանց ապահովման ուղղությամբ՝ տնտեսական վերականգնմանը զարկ տալու և վաղվա աշխարհի համար ավելի լավ կյանք կերտելու նպատակով:

Ճգնաժամի հենց սկզբից Եվրոպական միությունը համերաշխություն և համագործակցություն է դրսևորել միջազգային գործընկերների հետ համավարակի դեմ պայքարի ոլորտում, այդ թվում նաև՝ Արևելյան գործընկերության երկրներում: Եվ մեր ջանքերը շարունակվում են, քանի որ մենք կարող ենք ոտքի կանգնել միայն միասին:

Այս շաբաթ մենք տոնում ենք **ԵՄ և ԵԽ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագիրը**: Այս գործընկերության կողմից իրականացվող աշխատանքն ամբողջ աշխարհում ժողովրդավարությունը՝ մարդու իրավունքների

և իրավունքի գերակայության հետ մեկտեղ խթանելու և պաշտպանելու մեր ջանքերի կարևոր բաղադրիչն է: Այն նաև կարևոր է վերականգնման ջանքերի համատեքստում. առանց ժողովրդավարության չեն կարող գոյություն ունենալ ո՛չ երկարաժամկետ զարգացումը և տնտեսական բարեկեցությունը, ո՛չ էլ խաղաղությունը և կայունությունը: Նախագահ Ֆոն դեր Լեյենն ընդգծել է դա ԵՄ իրավիճակին նվիրված 2020թ. իր վերջին ելույթում:

Ինչ վերաբերում է մեր **Արևելյան գործընկերության** քաղաքականությանը, ապա «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագիրը հիմնարար դեր է ունեցել մեր գործընկեր երկրներում ժողովրդավարական ինստիտուտների և լավ կառավարման ամրապնդման գերակա ոլորտներում արդյունքների հասնելու գործում: Ավելի վաղ այս տարի ԵՄ-ն առաջադրել էր հինգ նպատակ 2020թ.-ից հետո Արևելյան գործընկերության ապագա քաղաքականության համար: Մենք նախանշում ենք, թե ինչպես է ԵՄ-ն համագործակցելու գործընկեր երկրների հետ ընդհանուր մարտահրավերների հաղթահարման և նրանց **դիմակայունության** ամրապնդման նպատակով՝ այսօրվա և վաղվա մարտահրավերների լույսի ներքո: Ի թիվս այլնի, մենք կոչ ենք անում **նորովի նվիրվել գործընկերության հիմնարար սկզբունքներին:** Դիմակայուն և ժողովրդավարական կառավարում և ինստիտուտներ, իրավունքի գերակայություն, հաջողված հակակոռուպցիոն քաղաքականություններ, պայքար տնտեսական և կազմակերպված հանցավորության դեմ, մարդու իրավունքների և անվտանգության նկատմամբ հարգանք՝ դրանք են ուժեղ ու դիմակայուն պետությունների և հասարակությունների հիմքը: Դրանք են նաև **արդյունավետ գործարար միջավայրի երաշխավորման** նախապայմանները, որը **կներգրավի օտարերկրյա ուղղակի ներդրումներ, ինչպես նաև** կապահովի **կայուն տնտեսական աճ:**

Հիմք ընդունելով այս հինգ քաղաքական նպատակները՝ այժմ մենք աշխատում ենք **թիրախային արդյունքների** վրա, որոնք կարձագանքեն մեր առջև ծառացած մարտահրավերներին և կապահովեն շոշափելի դրական արդյունքներ բոլոր քաղաքացիների համար: Այս թիրախային արդյունքները պետք է ընդունվեն Արևելյան գործընկերության գագաթնաժողովում՝ գալիք տարվա մարտ ամսին:

Ես վստահ եմ, որ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագիրը կշարունակի օգնել մեզ հասնելու հետագա դրական արդյունքներին, այդ թվում նաև՝ որոշ նոր ոլորտներում:

Նոր **թվային գործիքների** արագ զարգացումը հսկայական ներուժ է բերում մեր հասարակությունների և տնտեսությունների համար, բայց նաև՝ նոր մարտահրավերներ ու սպառնալիքներ: Նրանց պաշտպանող հիմնարար իրավունքներն ու կանոնները նաև պետք է կիրառվեն կիբեռտարածքում: ԵՄ-ն շարունակում է իր հանձնառությունն աջակցելու մեր Արևելյան գործընկերներին՝ Եվրոպայի խորհրդի «**Կիբերհանցագործությունների մասին Բուդապեշտի կոնվենցիա**»-ն լիարժեք կերպով իրականացնելու ուղղությամբ, որը կարևոր է արդյունավետ քրեական արդարադատության և իրավապահ մարմինների կողմից արդյունավետ արձագանքի ապահովման համար: Այն կարևոր է մեր քաղաքացիներին նման սպառնալիքներից պաշտպանելու համար:

Եվրոպայի խորհրդի հետ մեր երկարամյա համագործակցությունը կօգնի մեզ հասնել այս և այլ ընդհանուր նպատակներին Արևելյան գործընկերության

երկրներում ժողովրդավարությանը վերաբերող հարցերում: Հուլիս ամսին ԵՄ-ն ընդունել է **Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության** իր **առաջնահերթությունները** գալիք երկու տարիների համար: Դրանք նաև ներառում են այնպիսի ոլորտներ, որոնք առաջնահերթություն են այս համագործակցության համար:

Մեր կողմից աջակցվող գործողությունների թվում է նաև նոր **«արագ արձագանքման մեխանիզմը»**, որի միջոցով մենք ֆինանսավորում ենք սահմանադրական հարցերի և ընտրական օրենսդրության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից կարծիքների տրամադրումը: Այսօրվա դրությամբ ընթացք է տրվել 12 դիմումի Հայաստանից, Վրաստանից, Մոլդովայից և Ուկրաինայից: Այս կարծիքները հաճախ օգնել են հանգուցալուծելու դժվար քաղաքական խնդիրներ:

Տիկնայք և պարոնայք, եկեք օգտագործենք գալիք 3 օրը մեր ընդհանուր ձեռքբերումները տոնելու նպատակով: Ավելին, ես պատրաստ եմ Արևելյան գործընկերության՝ **2020թ.-ին հաջորդող նպատակների** մշակմանն ուղղված մեր աշխատանքի ընթացքում դիտարկել այն առաջարկությունները և գաղափարները, որոնք կարող են առաջանալ այս քննարկումների արդյունքում:

Մաղթում եմ բոլորիդ հաջողված միջոցառում՝ լի հարուստ համատեղ մտորումներով այն մասին, թե ինչպես կառուցել ավելի դիմակայուն հասարակություններ մեր գործընկեր երկրներում:

Շնորհակալություն Ձեր ուշադրության համար: